ՈՐՈՇՈՒՄ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 26.03.2021թ. թիվ 2112463553 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 08 >> 04 2021թ. 7-13- 5840 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Գնել Գասպարյանի ՄԴ/27447-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Ավան Առինջ 2-րդ միկրորջանի 1/2 շենքի 6-րդ բնակարանի բնակիչ Գնել Գասպարյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112463553 որոշումը՝ նշելով, որ համաձայն չէ որոշմամբ արձանագրված իրավախախտման հետ, քանի որ տրամադրված տեսանյութերից մեկը չի բեռնվում:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112463553 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 51-րդ կետի համաձայն՝ ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների համար երթևեկության գոտիների քանակը որոշվում է գծանշմամբ և (կամ) 5.15.1՝ <<Երթևեկության ուղղությունները գոտիներով>>, 5.15.2՝ <<Երթևեկության ուղղությունները գոտիով>>, 5.15.7՝ «Երթևեկության ուղղությունը գոտիներով» և 5.15.8 «Գոտիների քանակը» նշաններով, իսկ եթե դրանք բացակայում են, ապա վարորդների կողմից՝ հաշվի առնելով երթևեկելի մասի լայնությունը, տրանսպորտային միջոցների եզրաչափերը և դրանց միջև անհրաժեշտ միջկողային տարածությունը: Նույն որոշման 40-րդ կետի համաձայն՝ շրջադարձից կամ հետադարձից առաջ վարորդը պետք է նախապես զբաղեցնի երթևեկության տվյալ ուղղության համար նախատեսված երթևեկելի մասի համապատասխան եզրային գոտին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, **երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով**:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112463553 որոշմամբ իրավախախտումն ամրագրած տեսանյութի լրացուցիչ ուսումնասիրությամբ հիմնավորվել է, որ դիմումատուին պատկանող <<TOYOTA>> մակնիշի 36UT308 հաշվառման

համարանիշի տրանսպորտային միջոցը 07.03.2021թ-ին ժամը՝ 12:20-ին, Երևան քաղաքի Անդրանիկ-Բաբաջանյան փողոցների խաչմերուկի հատվածում երթևեկությունը ուղիղ թույլատրող գոտուց երթևեկել է դեպի աջ և խոչընդոտ հանդիսացել երթևեկության մյուս մասնակիցների: Տեսանյութը փաստում է նաև, որ դիմումատուն հարկադրված չի եղել խախտելու ճանապարհային երթևեկության կանոնները:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Ինչ վերաբերվում է դիմումատուի պնդմանը, որ <<www.police.am>> կայքէջում տեղադրված տեսանյութի անհասանելիությանը, ապա այն ներբեռնվում է և հասանելի է ակտի հասցեատիրոջը, իսկ տեսանյութը նայելու անհնարինությունը կարող է կապված լինել դիմումատուի համակարգչի ծրագրային ապահովման հետ:

Այսպիսով, վարչական վարույթի ընթացքում հիմնավորվել է, որ վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112463553 որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 26.03.2021թ. թիվ 2112463553 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Սույն որոշման օրինակն ուղարկել Գնել Գասպարյանին:

Ե.Կարապետյան

Կատարող՝ Է.Հովհաննիսյան
Հեռ. 011544783